ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

Հայաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուրների շարքում կարևոր տեղ են գրավում XIII—XVIII դարերի մանր ժամանակագրությունները։ XVIII դարի երկրորդ կեսին աստիճանաբար մեծանում է վավերագրական սկզբնաղբյուրների քանակը, ավելանում են տպագիր հրատարակությունները և համապատասխանաբար նվազում ժամանակագրությունների կազմումը։ XVIII դարում կազմված ժամանակագրությունների մեջ հետզհետե նկատվում է տեղայնացման միտում և նրանց մեջ ներկայացվում են գլխավորապես որոշակի գավառների կամ նահանգների իրադարձությունները միայն։ Վերջիններս վստահելի ու հաճախ եզակի վկայություններ են պարունակում և, ըստ այդմ, պատմական սկզբնաղբյուրների շարքում ձեռք են բերում ուրույն արժեք։ Նման բնագրերից է տեր Հարությունի կազմած տարեգրություն-ժամանակագրությունը, որը պահպանվել է ինքնագրով, սակայն մնացել անտիպ և աննկատ։ Այնտեղ արձանագրված են XVIII դարի վերջին քառորդի և XIX դարի առաջին տասնամյակին Բարձր Հայքում տեղի ունեցած իրադարձությունները։ Ժամանակագրության հեղինակը ապրել է էրզրումում և իրադարձությունների ականատես ժամանակակիցն է։ Տեր Հարությունի մասին որոշ տեղեկություններ արձանագրված են իր իսկ կազմած ժամանակագրության մեջ։ Ծննդյան թվականը հայտնի չէ, սակայն հաղորդվում է, որ որդին էր կոշկակար Մանասի (մահ. 1779 թ. փետր. 8-ին), ամուսնացել էր 1779 թ. սեպտեմբերի 20-ին և օրհնվել 1784 թ. մարտի 2-ին Պետրոս վարդապետ Բերդումյանի «ձեռամբ»։ 1786 թ. նա ունեցել է երկվորյակ որդիներ, 1795 և 1796 թթ. ուխտի է գնացել Ս. Կարապետ, 1798—1799 թթ. ուխտագնացությամբ այցելել է Երուսաղեմ, 1805 թ. մայիսի 29-ին եղել է խանդակ փորելու գնացած ժողովրդի մեջ, 1806 թ. պսակել է իր Սարգիս անունով որդուն, 1807 թ. եղել է Դանիել կաթողիկոսի՝ պղսահայ համայնքին և սուլթանական արքունիք ուղարկված խնդրագրի կնքողներից մեկը։ 1807 թ. դնել է նոր տուն, վճարելով 1300 ղուռուշ։ 1807 թ. ունեցել է կս մեկ արու զավակ, որին անվանակոչել են Գևորգ։ Ժամանակագրությունը ընդհատվում է 1810 թ. դեպքերի հիշատակումով, որից կարելի է ենթադրել, թե այնուհետև նա այլևս կենդանի չէր։ 1821 թ. գրանցումները կատարված են որդու՝ Սարդսի կողմից, որից հայտնի է դառնում, թե Կարինի Կարապետ արքեպիսկոպոսի կողմից նա ևս ձեռնադրվել է քահանա։

Ժամանակագրության մեջ արձանագրված են թուրքական փաշաների միջև ընթացող անհաշտ պայքարի բազում դրվագներ, ստորին խավերի իրավական ու տնտեսական դրությունը պատկերող վկայություններ, հայ ժողովրդի կրած դավանական ու էթնիկական հալածանքների մասին փաստեր ու նկարագրություններ, նահանգի գյուղական վայրերի ազգային կազմի մասին վկայող փաստեր, հայ բնակչության առանձին հոծ գոյության և նահանգի շրջանակներում նրանց ունեցած դիրքի ու դերի մասին ակնարկներ, Դավիթ-Դանելյան պայքարի, ռուս-թուրքական 1806 թ. սկսված պատերազմի ընթացքի մասին հետաքրքիր մանրամասներ, բնական աղետների, սովի ու սղության մասին հաղորդումներ և այլն։ Ուշագրավ է 1798 թ. գարնանը Երուսաղեմ ուխտագնացության մասին պատմող դրվագը, որի ժամանակ ինքը ականատես է եղել Երուսաղեմի քրիստոնյա համայնքի կացության վրա Նապոլեոն Բոնապարտի Եգիպտական արշավանքի ունեցած ծանր հետևանքներին։ Նրա հաղորդումները լիովին համընկնում են սկզբնաղբյուրներում պահպանված այլ նկարագրություններին[2]։ Հետաքրքիր է մասնավորապես

---

1 *Տե՛ս Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Հակոբյան, հ. Ա—Բ, Երևան, 1951, 1956։*

2 *Երուսաղեմի Պետրոս պատրիարքը 1798 թ. նոյեմբերի 11-ին գրած նամակով տեղեկացնում էր Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին. «...ազգն գաղղիացւոց մեծահանդես նաւուք բազմութեան յանկարծուստ իմն զԱղէքսանդր ծովեղր քաղաքն պաշարեալ, յորմէ զոտս իւր յԵգիպտոս*

այն նշումը, թե Երուսաղեմում շրջափակված հայ ուխտավորներին Աքայի «Ջազար փաշան[3] շատ տիրութիւն արաւ յաթոռներն իւայ հայոց, մայիսի 24-էն սուրբ Երուսաղեմայ ելանք, ճամբայ եղաւ, Ջազար փաշան մարթ ղրկեց՝ հայոց յուխտաւոր տարաւ Յաքայ, սիրով ճանբեց, յուլիսի 30-ին տեղս հասանք»։

Ժամանակագրության ընդգրկած 31 տարվա (1779—1810 թթ.) ընթացքում էրզրումում, ըստ էնվեր Կոնուկչու կազմած ցանկի, պաշտոնավարել և պաշտոնանկ են արվել 32 փաշա[4]։

խաղացուցեալ զմարդիս սրոյ ճարակ տալով խուռն ամբոխիւք իբր անհամար թուով ի փոքր միջոցի զայն ինքեան իսկապէս դրաւելոյ զկնի, շուրջ զնովաւ եղեալ գաւառսն սարսեալ դողացոյց, ահ երկիւղի անողորմութեան նորին։ Ահա այս ձայն հնչման նորին ոտից շարժման մինչ յամի 1247 (1799) յամսեանն յունիսի յաւուրս 28 եկեալ հասանէր յունկս ազարացի բնակչացն սրբոյ Երուսաղէմի, իսկոյն սոքա յամայնաժողով գումարմամբ ...զվանորայս առապուռ հարկանել զատամունս կրճտէին և զամենայն քրիստոնեայս ի սուր սուսերի մաշել, զյետինն ոչ թողլ ետ աստուած, բայց զառաջինն իրաւամբ կատարեցին, զի դիմեալ բազմութեանն ի վանս լատինացուց սուսերամերկ յարձակմամբ, զոչ սակաւ վնաս անդէն արարեալ զդրունս խորտակելով, զինչս յափշտակելով, դեռևս ոչ շիջանէր հուր կատաղման նոցին, այլ խոստացեալ բռնացան ի կապանս և ի բանտս զվեքիլս և զթերճիմանս յունաց և լատինացուց և զմեր թերճիմանն միայն արկանել, զորս զկնի արձակեալ զզէնս ի վանորէից երից ազգացս ևս խնդրեալ և ի ներս մտեալ որոնեալ և ոչ գտանելն նոցին յամօթի հարիլ և ի դրունս վանուց զինաղգեստ սրիկայս կացուցանել, տակաւին ձեռք նոցին բարձրացեալ ի վերայ մեր, զմիաբանս երից վանուցն ի սուրբ Յարութեան տաճարն իբր ի բանտի արդելեցին և այսպէս խաղաղութիւն թարգմանեալ քաղաքն Երուսաղէմ ի ներհակն միտեցաւ, զի տիւ և զդիշեր ձայն գուժի և լալոյ անպակաս իսպառ հատեալ էր քուն հանգստի յաչաց ամենից, զի համայն քաղաքս ի ձայնէ դոչման և հրացանի բողոք առ յերկինս առաքէր։ Զայս օրինակ ոչ ինչ պակաս տեսելոյ զկնի քան զԴ(4) ամիսս էհաս առ մեզ ողորմութիւն աստուծոյ, զի արքունական հրաման հասեալ առ Ճէզար բաշայն, նորին երկիւղն որպէս զօձ թմրեցոյց զկատաղեալսն և ապա հանեցին զարդելեալսն ի սուրբ Հարութեան տաճարէն և ի կարգ առաջնոցն ժամանակաց փութացաք զկացութիւնս վանօրէից և մեր ուղղեալ, բայց զի՞նչ օգուտ անտի, յորժամ վնասն կուտակեալ իցէ ի մեզ...» (Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 258, վավ. 37, բնագիր)։ Ուշագրավ է, որ, ինչպես այդ արձանագրված է մի ձեռագիր Ճառընտրի լուսանցքում, Պատրիարքը նախապես տեղեկացված է եղել իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառման մասին. «Այսօր գիր մի եկն առ Սրբազանն ի Ստամպօլու, և մեք էաք ի պախճան, աւետատու բան գրեալ էր տիրացու Սարգիս վէքիլն, թէ սեպտեմբերի սկիզբն, որ էր պատկեր աւուրն, նաւն ելանելոց աստի և մեք բախացաք և ասացաք. աստուած բարի ճանապարհ տայ, ասացաք» (Բարկէն Կիւլեսերեան, Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 17)։

[3] Ջազար փաշայի պատմությունը («Թարիխ Ահմեդ Պաշա՝լ Ջազզար») գրել է ծագումով հայ Նիկոլա աթ-Թուրքը (1763—1828), որը հեղինակել է նաև Եգիպտոսի «Ֆրանսիական դրավման պատմությունը»։ Վերջինիս հրատարակությունները տե՛ս His oire de l'Expedition des Franca s en Egypte par Nikoula el-Turk, publieè et traduite par Mr. Des-Granges aine, Pa is, 1839. Nicolas Turc. Chronique d'Egypte, 1798—1804, ed. et trad. G. Wiet, Ca.o, 1950. *Ջազար փաշայի և Նիկոլա աթ-Թուրքի մասին տե՛ս Ե. Հ. Նաջարյան, Լիբանանը 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 104—105։*

[4] Enver Konukçu, Se'cuklula dan cumhuriyete Erzurum, Ankara 1992, s. 226, 251.

Դյուրացնելու համար ստորև հրատարակվող ժամանակագրության ուսումնասիրությունը, էնվեր Կոնուկչուի կազմած ցանկից առանձնացնում ենք 1779—1810 թթ. փաշաների ցանկը.

Հաջի Ալիփաշազադե Միկդադ—1779,
Դազստանցի Հաջի Ալի փաշա—1779,
Իբրահիմ փաշա—1780,
Իզզեթ Մեհմեդ փաշա—1780,
Մուստաֆա փաշա—1781,
Դանալի Մեհմեդ փաշա—1782,
Յուսուֆ Զիյա փաշա—1794,
Սեյիդ Ահմեդ փաշա—1797,
Ալա էդ-դին փաշա—1799
Բաստալ Հյուսեին փաշա—1800,
Աբդուրահման փաշա—1801,
Ալա էդ-դին փաշա—1802,

Տեր Հարությունի նկարագրություններից պարզվում է, որ բնավ էլ խաղաղ ճանապարհով չեն կատարվել պաշտոնանկությունները։ Դրանք հիմնականում ուղեկցվել են արյունալի ընդհարումներով։ Այդ ընդհարումների ժամանակ, բնականաբար, մեծապես տուժել է խաղաղ բնակչությունը և միայն մեկ դեպքում է ժամանակագրության մեջ արձանագրված (1788 թ.), թե նորընտիր աղայի պաշտոնավարությունը (որը մեկ տարուց էլ պակաս տևեց) «հայոց ազգին լաւ էր»։

Այս ժամանակագրության մեջ գրանցված որոշ փաստերից կարելի է կատարել նաև այն հետևությունը, թե Էրզրումի նահանգի հայ բնակչությունը ամբողջությամբ չէ, որ գտնվում էր լիակատար անպաշտպան ու անզոր վիճակում, կային առանձին վայրեր, գյուղախմբեր, որոնք կարողանում էին ինքնապաշտպանությամբ դիմագրավել իրենց ներքին գործերին օսմանյան միջամտություններից։ Ավելին, պարզվում է, նրանք որոշ չափով դուրս էին օսմանյան վերահսկողությունից և իրենց մեջ ապաստան էին տալիս անգամ օսմանյան իշխանությունների հետապնդումներից խույս տվող թուրք գործիչներին ևս։ Այսպես, տեր Հարությունը հաղորդում է, որ 1805 թ. արքունական հրամանով Էրզրումի նոր նշանակված փաշան փորձում է հաշվեհարդար տեսնել անհնազանդ Սահմուտ փաշայի հետ, սակայն «տարապակին մեկն գնաց ծածուկ Սահմուտ փաշէն՝ բեզի յըսպանըն պիտի, պապըտ, հայրըտ փախան հայոց մեջն, յետոյ ելան, դուն ևս գնայ։ Նայ ևս գնաց հային մեջըն»։

Սեզ քիչ բան է հայտնի XVIII դարի վերջին քառորդին Հայաստանում օսմանյան իշխանությունների անօրինությունների դեմ հայ բնակչության մղած պայքարի մասին։ Ուստի մեծ արժեք ունի նաև այն հաղորդումը, որ պահպանվել է այս ժամանակագրության մեջ։ Այստեղ ասամվում է Երզնկացի Մրթոյի (Սարտիրոս անվան տարբերակը) անհաշտ պայքարի մասին, որի գլխի համար 1793 թ. փետրվարի 16-ին սուլթանական ֆերման էր եկել։ Ի կատարումն ստացված ֆերմանի, Էրզրումի փաշան, ինչպես պատմում է տեր Հարությունը, «քեհին հետ շատ յասկար զրկեց Թէրճնու (Դերջանի) Մուղտատ բակին, գնացին գուղն կօխեցին»[5]։ Մրթոն, սակայն, կարողանում է խույս տալ (բնագրում՝ փախչել) և զինակիցների հետ ամրանալ ամրոց-աշտարակում։ Օսմանյան զորքերի ներկայացուցիչը՝ «ղափուջի պաշին» Մրթոյի հետ փորձում է բանակցություններով ու կաշառքով լուծել հարցերը և նրան առաջարկվում է հինգ հարյուր քիսայ թուրքական դրամ։ Տեր Հարությունի համառոտ գրանցումով, Մրթոն «չի լինիլ՝ ասաց, (թուրքերը) գնացին տեղերին» (իմա եկման դիրքերը)։ Մեկամսյա պաշարումից հետո, այնուամենայնիվ, թուրքերին հաջողվում է քրդերի միջոցով, որոնց հայերը հավանաբար վստահել էին, խորամանկությամբ տիրել ամրոցին՝ «Յիսուն քուրթ տերեց (դրեց) վերի քարըն Մուղտատ բակըն, քըրթին հետ մուշավարայ էրաւ, յերիշ էրին՝ ղուլան առին, հինգ մարդ սպանըցին, Սրթօն եղբարն տղաքն սպանըցին, մինչ ի յընտանիքն մերկացուցին, շատ յըրըսվայութիւն արին, մարտի 15-ին գըլըխներն բերին»։ Տեր Հարությունի այս արձանագրած փաստը մեզ հայտնի առաջին հիշատակությունն է օսմանյան իշխանությունների կողմից քըրդերին հայ ազատագրական պայքարի դեմ օգտագործելու մասին։

Ժամանակագրությունը այլևայլ բնույթի վավերագրերի հետ մեկ ընդհանուր կազմի[6] մեջ կարված պահպանվել է Լազարյանների արխիվում (տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, Լազ. արխիվ թղթ. 114, գործ 49, վավ 55, թերթք 160—172, բնագիր)։ Այն հրատարակվում է բնագրին հարազատ, առանց միօրինակության բերելու տարբեր ուղղագրությամբ ներկա-

---

Վանեցի Թիմուր փաշա—1783,
Մեհմեդ փաշա—1783,
Սուլեյման փաշա—1783,
Ջանիկցի Հաջի Ալի փաշա—1783,
Բատալ Հյուսեին փաշա—1784,
Մուստաֆա փաշա—1786,
Սեյիդ Ահմեդ փաշա—1787,
Արզուլլահ փաշա—1789,
Ցեյզի Սուլեյման փաշա—1790,
Սեյիդ Ահմեդ փաշա—1791,
Օսման փաշա—1803
Մահմուդ Թայյար փաշա—1804,
Հաջի Յուսուֆ Զիյա փաշա—1805
Հակի փաշա—1805,
Կամախեցի Հաջի Օսման փաշա—1807,
Բոսնիացի Աբդի փաշա—1808,
Շերիֆ փաշա—1809,
Հալիլ Համիդ փաշա—1809,
Մեհմեդ Բեհրամ փաշա—1809,
Իբրահիմ փաշա—1810,
Էրզրումցի Մեհմեդ Էմին փաշա—1811,

5 Իմա՝ գյուղը շրջապատեցին։

6 Կազմի վրա մատիտով ռուսերեն գրված է. «Սուրենյանցի գրադարանից»։

յացված բառերը։ Ժամանակագրության լեզուն խրթին է՝ թուրքերեն բառերի առատ օգտագործումով, ուղղագրությունը՝ անկանոն, հայոց մեծ թվականը գրված է արաբատառ գրչությամբ, չկան կետադրական նշաններ։ Կետադրությունը նշանակված է մեր կողմից։ Թուրքերեն բառերի թարգմանությունը, որը բերվում է հրապարակմանը կցված բառարանում, կատարվել է Մ. Կ. Զուլալյանի սիրահոժար օգնությամբ, որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

Պ. Ա. ՁՈՐԱՆՅԱՆ

* * *

160ա || Թվին 1228 (1779) Հաճի Ալի փաշա[յ]ին տղան Մուղտադ փաշան սարայը 24 սահաթ թօփեցին, Ֆա[յա]տօղլեն Խալիլ փաշան՝ յերկօ թղուր, քաղքես եսեր, նայ ես չուզեցին, յերկուքն ալ վեռընտեցին, յետոյ ֆարման եկաւ, թե՝ փաշան ղալայ բիտի անրկ, Բասենու յասկարն հոս էր, տեղուս յասկարին հետ յանկան յետէվեն, չը կարացին բռնել։

Թվին 1228 (1779) փետրվարի 8-ին՝ յուրբաթ գիշեր լուսի շափաթ հաւախօսին ճգմայճի Մանասն, որ փոխեցաւ առ Քրիստոյս։

Թվին 1228-ն (1779) մայիսի 20-ն վաղիրլար քահիայսի Իպրահամ փաշան սընկառ իշու գուղն տաւաթեն, յանտից քօռ Մուֆտին անտից սուրկուկ արաւ գիտութեամբ Խալիլ փաշային։

Թվին 1228-ն (1779) սեկտեմբերի 20-ին լուսայհոգի ճզմաճի Մանասի յորդի Յարութին հարսանիքն։

Թվին 1230 (1781)-ին Իպրահամ փաշին տղան՝ Մուստաֆայ փաշան, խդր մուսալիմըն Ֆայատօղլի Խալիլ փաշին սարային մէջն քահային յօտան ղուրղուշունով զարկին՝ փարալամիշ էրին։ Ղատայ ղուրղուշուն դիպաւ գօմրուկջուն Ղահրիհման բակին, բակըն պաղեցաւ, քօռ Մուֆտե դիտութեամբն, ասին՝ թե ֆարմանլի է, մալըն զաֆտ արին միրին։

Թվին 1231-ին (1782) նոյեմբերի 25-ն Տանաճի Մահամատ փաշան այստից սուրկուն էրին։

Թվին 1232-ին (1783) յունվարի 13-ին Դամուր փաշան Մուֆտ օղլին վախտաղասի էր, իւր ձեռամբն սարայը խեխտեց, խանուդ պազար կօղպեցին, իրեկ յենկիչարի կըռվին մէջուն յը սպանիցին,

Թվին 1233-ին (1784) մարտի 2-ն տեր Յարութիւնի յօրհնըվիլն ձեռամբ Փերթումեան յաղայ Պետրոս աստուածիմաստ վարդապետն։

Թվին 1233-ն (1784) յուլիսի 7-ին վարդավառի շափաթ երեկոյին սահաթըն 2-ին շարժ ելաւ, միյուս գիշերն սուրբ Կարապետն (թ. 160բ) բըլաւ, Երզիսկան անցաւ, քաղքիս փաշան զօրօք պատմիշ էղաւ։

Թվին 1234-ին (1785) յունիսի 12-ն հաճի Ալի փաշան մեռաւ։

Թվին 1235-ին (1786) փետրվարի 6-ին աստուած մեզի էքիզ մանչ պարքեւեց, Սարքիս, Նիկողոս անվանեցին, որ աստուած յերկար կենոք պահէ։

Թվին 1237-ն (1788) փետրվարի 22-ին Ղայային տղան աղայ էրին, յեթմիշ տօխուզն շարթ ըրին, չուզեցին, քսան յը հինգըն կուզէին, կովեցան, թուքան-պազար կողբեցին, աղային տունըն կոխեցին, մալն եաղմայ էրին, աղան փախաւ՝ Իբրահամ փաշին հարամն ընկաւ, վեց մարդ յըսպանըցին, յետոյ աղայ եղաւ, հայոց յաղդին լաւ էր։

Այսմ թվռեն ահակին կարկուտ էրաւ, մէկ հատեն 200 դրամ, յունիսի 11-ին, վնաս չեղաւ։

Թվին 1238 (1789) յապրիլի 15-ին նոր կիրակին շատ նեղն էին՝ պայրախ բանային պիտի, անկարծակի ձայնըմ ելաւ, թէ սուլթան Համիթն իճեցուցին, յոմանք ասին, թե զահիրլամիշ արին, սուլթան Սէլիմըն նըստաւ։

Թվին 1238-ին[7] (1789) մայիսի 23-ին շարժ էլաւ, Բալու անցաւ։

---

7 Ընագրում սխալմամբ՝ 1838։

Այսմ թվոջս յունիսի 1-ին Կանայ գիւղէն յանորըն այլ ազգեմէն, քրիստոնեայի հինգ տարեկան տղամ յապականեց, գեղով կանքըցան՝ չի կաարցան, յետոյ Իպրահամ փաշային հարամըն սալին հեծաւ գնաց սարաին գաղանըն խրխտել տվեց։

Թվին 1238-ին (1789) Բաբիրթ մուֆտին չարսուն մուֆտին ղուրղուշունով ղարկին յըսպանեցին, յետոյ չարսուն խան ըրին, ջամին էրէցին, մեկ հայ ըսպանըցին, շատ ղազայ էրին։

Թվին 1238-ին Սարի քայիհան դեկտեմբերի 16-ին քաղաքացիկ ուֆարէն էկան, ալայով (թ. 161ա) ներս բերեց, միւս օրրն՝ երկու շափթի, սահաթըն 8-ին Թարվեղու դուռն յերիշ էրին՝ չը կարցին, կոակ ցըկին, Սալէհ պայրախտարն, Զին օղլին, շատ մարդ սպանեցին, ղընեերեն քակեցին, մալերը եաղմայ յէրին, միուս զօռպաներեն փախան։

Թվին 1239-ին (1790) մայիսի 13-ին յէշակջուն ախբար յԱհմատ աղան հաճի Յուսուֆ օղլին քաղքիս զօռպաներն 300 մարդով էկան Հասանղալայ, Եաղան օղլին տարան շարթ էրին, թէ մահ և կեանք մէկտեղ, Սարի քահիան 3 թօբ շատ յասկար ղրկեց, 18 օր նըստան, շափաթ յառավօտըն յերիշ էրին բերթին վըրան՝ պօղուլմիշ էղան, բասենցիք գնացին բերթն լըցվան՝ յԱհմատ աղան ըսաց. յերիշ անեմք մինչ ի քաղաք կօխենք, Եաղան օղլին ղայիլ չեղաւ, հաճի Յուսուֆ օղլէ հետ մուշավարայ էրաւ Յաղան օղլին, թէ՝ ես փաշին հետ լաւ եմ, քեզի պրծըցենեմ, Ահմատ աղային գըլուխն ղըրկեք՝ քոյ ետ լախրթ բրել տամ՝ տունըդ նստիր։ Յահմատ աղան իմացաւ՝ 3 շափաթին օրն հեծաւ՝ մեր քաղքի զօռպաներուն հետ գեֆերած երկուսին ալ ձեզի գլի, ինձի ինչ գլի, տունես էրեցին, մալըս յեաղմայ էրին, կին չիունիմ, տղայ չունիմ, յելան գընացին հաճի Յուսուֆ օղլին։

Նայեցաւ, օր մէնակ մնաց տանն եղբարքն, քանի մ մարդով գնաց Յաւնիկու բերթըն նրստաւ։ Եաղան օղլին եկաւ թուվանքճի պաշե քով, փաշան պուռնութի ղրկեց, Եաղան օղլե գլուխն կտրեցին, մալն եաղմայ էրին, Բասէն շատ լաւեր(ե)ցին։

Թվին 1239-ին (1790) յունիսի 12-ին վանքն մեկ մարդ սպանեցին։ 1000 ղուռուշ տվին, թէ յարուք, թէ իզին առին, որ յառաջնորդարան հիմանըն շինելու է։

161բ || Սոյն թվոճս յունիսի 10-ին յեշակճուն եղբորն՝ Ահմատ աղուն, ղարսցիք Զանքլի գուղըն բռնել էին, Սարի քահեային գրեցին, փաշան գըլուխն յուղեց, յունիսի 24 գլուխըն բերին, մըրղախըն ղարկին՝ սարայըն կայննցուցին։

Սոյն թվոճս յունիսի 16-ին 2 տերտեր ծեխի [իմա՛ ծխի] պատջառաւ հափրս արաւ փաշան, ՁԾ (600) ղուռուշ ջառմայ տվին իշխանաց, յընկան քաղաքով, ըսին՝ թէ Ճ—Մ (100—200) ղուռուշն հասարակ քահանաքդ տվէք, չի տվին, իշխանք պատարաքն վերուցին, շափաթ, գիրակի, չօրեքշափթի պատարաք անել տվին։

Թվին ՌՄԽ (1791) յուլիսի 29-ին մոմջի Ղուկասին աստուած դուստր մի պարգևեց, մեղաւորս տէր Յարութիւնս կընկահար [կնքահայր] էղայ, Հօռոմսիմայ անվանեցինք։

Թվին 1240-ին (1791) յԱրղուրում սըղութիւն եղեւ, սօմառն 32 ղուռուշ ցորեան կու տային։

Թվին 1242-ին (1793) փետրվարի 16-ին յէրզինկանցի Մըրթոյին գլխուն ֆարման եկաւ։ Փաշան քէհին հետ շատ յասկեար ղրկեց Թէրճնու Մուղտատ բակին, զընացին գուղն կօխեցին, փախաւ՝ ղուլան էլաւ, ղափուջի պաշին կանչեց պուռունըն, Մրթոն շատ իրիճայ արաւ, հինգ հարիւր քիսայ փարայ խօստացաւ, չի լինիլ՝ ասաց, գընացին տեղերին։

Յիսուն քուրթ տերեց վերի քարըն Մուղտատ բակըն, քրրթին հետ մուշավարայ էրաւ, յերիշ էրին՝ ղուլան առին, հինք մարդ սպանըցին, Մըրթոն եղբարն տղաքն սպանըցին, մինչ ի յընտանիքն մերկացուցին, շատ յըռըսվայութիւն արին, մարտի 15-ին գըլխըներն բերին։

Թվին 1242-ին (1793) սուլթան Սէլիմըն ֆարման ղրկեց, բետիաթ բաներու խանթնըրն փակեցին, 3 օր սարայըն քարեցին, յինկիչար աղասին ծեծեցին, գօմրուկն քարեցին, պաթալ էրին մարտի 10-ին։

162ա || Թվին 1244-ին (1795) օգոստոսի 10-ին մենք տնօվ սուրբ Կարապետ յուխտիւ յըրկերպադութիւն գընացինք։

Թվին 1244-ին (1795) յաղպիուխ Յակոբ վարդապետն յառաջնորդ էր Կարնոյ քաղաքիս սուրբ Կարապետու, յիւր կողմանն վաքիլ էր կարգեր Յալիքսան վարդապետն, յելաւ յառաջնորդն տասըյ քաջից իմացաւ, սուրկուն ֆարման հանեց, քաղաքն բոլորըն թօփ եղան՝ չը կարցան պրծըցընել, մակ յան խառնըն Յանիսսնըն շահար վաքիլ էր, հետն տրին՝ յարզօվ մինչ ի յայլ ազդաց գրօվն տարան սուրբ Կարապետ, Յանիսսն մահտեսի Յօհաննեսն եկաւ, յԱլեքսան վարդապետին մնաց։

Թվին 1244-ին (1795) յօգոստոսի 25-ին Յուսուֆ փաշան յուզեց քօռ մուֆտուն, տղան՝ յԱպտուրահման մուֆտին, գնաց յԵրզինկան, յանկեց սուրկուն էրաւ մեծըն Պոլիս, յետոյ փաշան շատ զիննաթօվ քաղաք մտաւ։

Այսմ թվոճս սեկտեմբերի 18-ին[8] խատումշահըն[9] Թիֆլիզ առաւ, քաղաքըն այրեց, գ(է)րի արաւ[10]։

Թվին 1244-ին (1795) դեկտեմբերի 20-ին Շահուսէինին տղան Մելիքան[11] զարկեց, Յուսուֆ փաշան թային երաւ, Քօլօսին տղան Վալի փաշան Թերջենու քըթին մեկ կիւղն զարկեց, լազկիյ ասկար յանիր յըսիր արին՝ բերին յօղլուշախրն ծախեցին։

Թվին 1245-ին (1796) յունվարի 4-ին[12] խատում շահին յելլին եկաւ, Յուսուֆ փաշան սարասկար էր, յենկիչարիք զուշաթմիշ էրաւ, փաշան յալայով[13] 4 թօփով գնաց Գումուշլի գումպեթըն յօրտի զուռմիշ արաւ, յելլին յալայօվ ներս բերեց, յելլուն մէկ մարթըն սպանեցին՝ զուրզուշուն դիպաւ։

Այսմ թվոճս փետրվարի 5-ին սաստիկ սել էլաւ Կարին։

Այսմ թվոճս մայիսի 8-ին գիշերըն սահաթըն 7-ին յաղեղ ելաւ յարեւելքն։

162բ || Այսմ թվոճս օգոստոսի 15-ին յԵփրիկեան Մովսէս աղաենց, Մսըրլեան Մկրտիչ աղաենց հետ տէր Յարութիւնս սուրբ Կարապետ գնացինք։

Թվին 1246-ին (1797) մայիսի 1-ին կանայք Յուսուֆ փաշին յարզուլ տվին, թէ բամպաք չրկայ, հացըն սուխը՝ ցորընըն պահել են։ Փաշան բարկացաւ, 14 գին տէրտերի տուն հափս էրաւ։ Յուռուսէ դարցաց կին մի զարարրն տրեց յարերն հափսե դրեց, ցորեն պահօղներն փախան, ցորեն զաֆտ էրաւ՝ սոմառն հինգ զուրուշ ծախեց, իրեկ կին զըրկեց մահխկաման [դատարան], յերկանըն շալակըն դրեց, ծեծեց, ամեն ալ վեր թօղեց, փարայ չառաւ։

Այսմ թվոճս Յուսուֆ փաշան քօռ Ալին դալի պաշի էր։ Թային արաւ, շատ ասկեարով, թօփով փետրվարի 15-ին Հաճի Ալի տղին բերթին վրայ փաթտեցին նստան, յունիսի 20-ին խափեյութէնով դուրս փերին, քալլան կտրեցին։

Թվին 1246-ին (1797) յաղպիուղ Յակոբ վարդապետն սուրբ Կարապետն միաբան Կըլ կրլ Յօհաննես վարդապետն, Մինաս վարդապետն սուրկուն արաւ։ Յուսուֆ փաշին սառաֆըն Ղարահիսար ձեռացներեն առաւ, ժամանակ ինչ քովեն պահեց, յետոյ յէջմիածին ղրկեց։

Այսմ թվոճս աղպիուղըն յավրանցի Յօհաննես վարդապետն Ղազար վարդապետն սուրկուն արաւ Վան։

---

8 Ճիշտը՝ սեպտեմբերի 12-ին։

9 Իմա՝ Աղա Մահմատ խանը։

10 Բնագրում՝ ատաւ։

11 Հայկական գյուղ՝ Քըղիի գավառում։

12 Ձեռագրում հստակ չէ, գուցե 9-ին։

13 Իմա՝ ալայով։

Թվին 1247-ին (1798) յապրիլի 8-ին տէր Յարութիւն աստուած կամեցաւ, տեղես ելայ սուրբ Յերուսաղէմ յուխտիւ յերկրպակութիւն գնացի, մեծն Պոլիս հասայ, Ֆռանկզըգըն Պօնօպոռթօն Մըսըր առաւ մայիսի 30-ին, սեկտեմբերի 7-ին յաջողմամբն աստուծոյ սուրբ Յերուսաղէմ հասանք, յոր միաբանքն սուրբ Յարութեան մեջն հապս արել էին այլազգիքն, տուտն չէին բանալ, հրեշտակաց տօնախըմբութեան օրեն դուռն բացվաւ, որ երթաինք սուրբ Յարութիւն, երթաիք շատ նեղութիւն քաշէինք, շատ փարայ տվին, երեք յաթոռն վերստին, թէ յեռյին յուխտաւոր որքան այր մարթ կար, բոլորն տարան սուրբ Յարութիւն հապզ արին, յայլազգիքն պատուհանէն (163ա) ղուրղուշունով մէկ հայի, մեկ ուռմի[14] զարկին՝ մեռան, մինչ ի Այքայ առնել հիւանդութիւն կար, իրենց քեֆօվն դարդան դնացին Մէսրի, էրկու թոփ յԱքայ թօղէլ էին, Ջազար փաշան շատ տիրութիւն արաւ, յաթոռներրն իյայ հայոց մայիսի 24-էն սուրբ յԵրուսաղէմայ ելանք, ճամբայ եղաւ, Ջազար փաշան մարթ ղրկեց՝ հայոց յուխտաոր տարաւ Յաքայ, սիրով ճանբեց, յուլիսի 30-ին տեղս հասանք։

1248-ին (1799) մարտի 5-ին Զաքարիայ պատրիարքն վաղճանեցաւ, Դանէլ պատրիարք արին։

Թվին 1247-ին (1798) դեկտեմբերի 21-ին Ղուկաս կաթողիկոսն վաղճանեցաւ, Դաւիթ վարդապետն Էջմիածնայ յարզովն գնաց մեծն Պօլիս։

1250-ին (1801) մարտի 9-ին Յօվսէփ վարդապետն[15] Թիֆլիզ վաղճանեցաւ, յաթոռն չէ հասաւ, վերեստին արզ արին Դանէլն կաթողիկոսութիւն խնդրեցին, Թոխաթ յառաջնորդ էր, պոլսեցիք գրեցին Դանէլին, թէ՝ մանզիլով երթաս, նայ ելաւ գնաց մատանըն մօհուր սահայն սառաֆն Փիլիպոս ամիրաին տեսութիւն, յուշացաւ, սուրբ յԱթոռն քըթմշումն եղև, Դաւիթ վարդապետն բարկացաւ, խանին խօսքն կարնեցի էփրիկեան հաճի Պապային, մահտեսի Ասլանին, ղաճար[16] վաքիլի, Յանիսուն մահտեսի Յօհանէսին դիտութեամբն Դաւիթն կաթողիկոս յօծեցին, յարզ արին, Սիմոն վարդապետն քաղաքներն արդէն մահալով գնաց մեծն Պոլիս Ֆարման բերեց, յիշատակել տվին։ Դանէլ (163բ) վարդապետն Պաեազիդ մնաց, կաթողիկոսն երեք մեծ վարդապետ ղրկեց Պաեազիթ, գրեց Դանէլ պատրիարքին. այսուհետև անունրն իմս լինի, խոսքն քոյ լինի, դուն՝ ինձի մեծ եղբար, միատեղ շահվինք, չէ գնաց, յետոյ եկաւ ասա, քաղաքով դեմ գնացին՝ բերին խուցն նստեցուցին, հաճի Պապան Ախլցխայ է, քաղաքն երկու թարաւ, [թարաֆ-կողմ] եղան, թոփալ Յակոբ աղան իշխաններով Դանելի կո(ղ)մն էր, այդմ ժամանակին տեղուս փաշայ քոռ Մուֆտին տղան մուֆտի էր, թօփալ Յակոբն, աղաներրն մահտեսի Ալահվերտէ տղաքն էին, Պոլիս նէստէին, նոցին ձեռամբն էրէք թուղ(թ) բէրին փաշային սիտութեամբն, Դաւիթի յանունըն վերուցին, յետոյ տարան ձիյով, բազմութեամբն, ղաւազներն՝ յառաջն, խալֆայ տէ ի փաշայեն ֆարաճա հոգուց, յաֆանտող ղօնաղըն տարան տեսութիւն քահանայուք իշխանօք, յետոյ սուն փաշան, վարդապետներն, տէրտէրներըն, իշխաններրն տարաւ հասս արաւ, թէ տաճիկներն ղրկեք ձեր խալֆան հայեցէնէ, խղճայի հայոցմէնէն 120 քեսա փարայ առաւ, Յօհանէս պատիարքն հանեցին, Գրիգորն պատիարք արին, Դանելն ղրկեցին Ղօշավանք, հօն կաթողիկոս օծեցին, մեռոն եփեցին, այլ աղքերրն Իւչքիլիսայ կասէն սուն վանքին, յարքունական հրաման բերին յանունըն յիշատակեցին, յետոյ բռնութեամբ տարան յաթոռն, Գրիգոր պատրիարքն ևս սուրկուն արին յաթոռն, Յօհանէս պատրիարքն վերըստին պատրիարք արին, Դաւիթին անունըն յիջեցին, Դանելն ժամ արաւ, գնաց վէհարանէն դատաստան խնդրեց, միաբաններն մեծ և փոքր ամենքն թոփ արին, նոցայ մեկեն գիր մի դրեց, թէ ահայ

14 Իմա՝ հույնի

15 Հովսեփ կաթ. Արղության (1743—1801)։

16 Կամ՝ շաճա՞ր։

ժամարար եմ, ահայ ձեռագիր տամ (164ա) երդմամբ, դուք ևս վկայ լինիք, որ կաթողիկոսութիւն չեմ ցանկայ, յետին միաբան եմ այսոյհետեւ։ Դաւիթ կաթողիկոս շատ սիրեց, իւր սեղանակից արաւ, Գրիգոր պատրարքն բանդըն դրեց, յետոյ Դանելն տարաւ էրէվան։ Շարիֆ փաշան փախել էր, Վան գնացել էր, խորհուրդ արին, թէ ինձ կաթողիկոս արայ, ես Շարիֆ փաշան ռուսաց խօսոքն Ախլցխայ նստեցընեմ։ Գրիգոր պատրիարքն տարան Երէվան, նայ ևս ասաց, ես երթամ այտ կատարեմ։ Խանէն մարթ ղրկեց յաթոռն, մինչ ի յետին տեղն մօհրեց, Դաւիթն կապանօք տարաւ մէլիքին տունըն գօղտուտսաղի արաւ։ Գրիգոր վարդապետն, Ներսէս վարդապետն ղրկեցին Թիֆլիզ։ Դանելն յանապատն նստեցուցին՝ մինչ ի խապարն գայ։ Թիֆլիզա գրեցին՝ Շարիֆ փաշայն բանըն չի լինիր, խանըն բարկացաւ՝ Դանելն հապս արաւ՝ քեզի ես [ս]պանեմ, ինձի խաբեցին, անոնք փախուցիր, Դաւիթին իզին արաւ գնացն յաթոռն, հապս արաւ, յետոյ գիր մի բռնեց, միրուքն թրաշար արաւ, մինչ շահն եկաւ Թիֆլիզու վրայ պօղլումիշ եղաւ, Դանելն հինքն կապանօք տարաւ մինչ ի Թավրեզ, Յօհանէս աղան ձեռացն առաւ, յետոյ շահըն Թավրեզու խանին գրեց, թէ սպանես, հայերն շատ իրիճայ արին, փարայ տվին ղրկեցին Մարախ խանին տունըն հապս արին, Դանել անուն յիշելն եասսաղ արին, շահըն գիտեր թէ սպանեցին։

164բ || Թվին 1250-ին (1801) մուֆտի Հաճի Հապգուրահման փաշան Քօլոսի տզին Վալի փաշին սարային մէճն յրսպանեցին դաքով, մալն ղաֆտ արաւ։

1250-ին (1801) հոկտեմբերի 10-ին յօրն հինգշաբաթի աստուած մեզի մէկ դուստր պարգեւեց՝ Սրբուհին անվանեցինք, որ աստուած ե[ր]կար կենոք պահե։

(Շարունակելի)